

4057200
22222

VICKEN CHETERIAN
editor

THE 44 DAY WAR

ARMENIA, AZERBAIJAN, AND
THE STRUGGLE FOR NAGORNOKARABAKH

ՎԻԳԷՆ ՉԸԹԸՐԵԱՆԻ
խմբագրությամբ

ԿՈՏՐԱՎԾ ՉԱԿԱՆ

ԱՐՅԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԳՄԻ
ԲԱԳՄԱՇԵՐՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունն անգլերենից՝
Սասուն Խաչատրյանի



ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 32:93/94(082)

ԳՄԴ 66.0+63g43

Կ 770

Կոտրված վահան: Արցախյան 44-օրյա պատերազմի բազմաշերտ վերլուծություն / Խմբ.՝ Վ. Չըթըրեան; Թարգմ.՝ Ս. Խաչատրյան.- Եր.: Newmag, 2025.- 476 էջ:

Այս գիրքը 2020-ի Ղարաբաղյան պատերազմին, նախընթաց դիվանագիտությանը, աշխարհաքաղաքականությանը, արմատացած պատկերացումներին, սպառազինության մրցավազքին ու ռազմական բարեփոխումներին կամ դրանց բացակայությանը, Հայաստանում և Ադրբեջանում հասարակական ու ներքաղաքական զարգացումներին վերաբերող 16 հոդվածների ժողովածու է: Հայ և օտարերկրացի 17 հեղինակներ քննում են 2020-ի պատերազմում Հայաստանի պարտությունը, դրան նախորդած իրադարձություններն ու զարգացումները:

ՀՏԴ 32:93/94(082)

ԳՄԴ 66.0+63g43

ISBN 978-9939-967-77-6

Այս գրքի հետազոտական աշխատանքներն ու հրատարակությունը ֆինանսավորել է «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկությունը, որի «Դեպի ուր» (Where do we go next) ծրագրի մասն է: Հրատարակության մեջ արտահայտված կարծիքները չեն ներկայացնում «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկության տեսակետները: Հիմնարկության աջակցությունը չի նշանակում որևէ կարծիքի կամ դիրքորոշման հաստատում:

Copyright © Vicken Cheterian, Calouste Gulbenkian Foundation, 2025

Published in Great Britain in 2025 by I. B. Tauris

Վ. ի. զ. Էն Չըթըրեանի խմբագրությամբ «Կոտրված վահան» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկության և Վ. ի. զ. Էն Չըթըրեանի հետ կնքած եռակողմ պայմանագրով:

Բովանդակություն

Ասապետ Գոչիկեան

2020-ի պատերազմից առաջ և ընթացքում Հայաստանի
քաղաքականության (ա)կյանա հետևանքները 9

Լեոնիդ Ներսիսյան, Սերվին Մուր

Ղարաբաղյան երկրորդ և ռուս-ուկրաինական պատերազմների
ռազմական կատարողականն ու ծախսողումները 29

Վիգեն Չըթըրեան

Հայաստանի աշխարհաքաղաքական երկընդրանքը. 59

Ջենգիզ Չանդար

Ռևիզիոնիստ Թուրքիան՝ Հարավային Կովկասում, ինչո՞ւ և ինչպե՞ս 87

Նաիրա Սահակյան

Հայաստանի պաշտոնական խոսույթը Ղարաբաղյան
հակամարտության շուրջ. 1988-2020 թվականներ 109

Ժիրայր Ամիրխանյան

Միջպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանում արևելյան ուժի
պաշարպանական բարեփոխման ծախսողման հիմնական որոշիչ գործոնները.
գաղափարական վիճիկ և հայեցակարգային դիստանսի ծանրությունը 129

Ջոել Վելդկամպ

Համերաշխության փարօրինակ պակաս. 2020-ի Ղարաբաղյան
պատերազմը և քրիստոնեական քաղաքացիական
հասարակությունն Արևմուտքում 169

Արիֆ Յունուսով

Ժամանակակից Ադրբեջանի իշխանական թիմն ու վերնախավերը 187

Շելլա Փայլան

Ղարաբաղյան երկրորդ պատերազմից
հետո մարդու իրավունքների վրա հիմնված մտքեցման որդեգրում 229

Լուսինա Բրտերս

Մինսկից հետո, հայ-ադրբեջանական դիվանագիտությունը՝
Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո 247

Գևորգ Օսկանյան

Կորսված փամսամյակներ, Ղարաբաղյան բանակցությունները՝
ընկալումների, ուժի և շահերի արանքում 275

Մինոն Մաղաքյան

Արցախի ժառանգությունը պահպանելու՝
Նախիջևանի մոնումենտալ դասերը 297

Սևինջ Սամադզադե

Ադրբեջանում Ղարաբաղյան երկրորդ պատերազմ փանող ուղին,
պետության և քաղաքացիական հասարակության միջև 317

Հովսեփ Բաբայան

Բուսական խաղաղապահ առաքելությունը՝ Լեռնային Ղարաբաղում 341

Նարեկ Սուքիասյան

Բուսաստանը և Ղարաբաղը 367

Տիգրան Եկաեան

Հայաստանն ունի՞ Սփյուռքի ռազմավարություն 395

Ծանոթագրություններ 418

17 ՆԱՅ ԵՎ ՄԻՋԱԳԳԱՅԻՆ
ԾՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔ



Ասպետ Գոցիկեանը քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դասախոս է, դոցենտ: Նա Ph.D աստիճան է ստացել Բոստոնի համալսարանում Հայաստանի և Վրաստանի օրինակով ուսումնասիրելով փոքր պետությունների արտաքին քաղաքականությունը: Փոքր պետությունների արտաքին քաղաքականության, Մերձավոր Արևելքում փոքրամասնությունների ու եվրասիական տարածաշրջանում զարգացումների թեմաներով վերջին քսան տարիների ընթացքում դասախոսել է և գիտաժողովներ կազմակերպել: Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում և Ուկրաինայում միջազգային կազմակերպություններին խորհրդատվություն է տրամադրում ապառաղիկալացման, քաղաքացիական հասարակության և դատական բարեփոխումների ծրագրերով:

2020-ի պատերազմից առաջ և ընթացքում Հայաստանի քաղաքականության (ա)կամա հետևանքները

Ասայետ Գոչիկեան

2020-ի սեպտեմբերի 27-ին աշխարհն արթնացավ տեղեկություններից, որ Լեռնային Ղարաբաղի շփման գծում ադրբեջանական լայնածավալ ռազմական գործողություն է ընթանում: Այն, ինչը հայտնի էր դառնալու որպես 44-օրյա պատերազմ, խաթարեց Հարավային Կովկասում սառեցված այս հակամարտության մասին տասնամյակներ տևած պատկերացումները և փլուզեց այն համոզմունքը, որ 2018-ի Թավշյա հեղափոխությամբ ժողովրդավարական անցմամբ Հայաստանը լուծելու է ոչ միայն ներքին սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրները, այլև առավելություն է ստանալու դարաբաղյան քանակցություններում:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանում պատերազմի վերաբերյալ քաղաքական որոշումների կայացման գործընթացը կենտրոնանալով պատերազմից առաջ և դրա ընթացքում ընդունված որոշումների վրա ու փորձելով պատկերել պատերազմի հանգեցրած էսկալացիայի համատեքստը և պատերազմի կառավարման խնդիրները: Դա անելու համար սույն գլխում քննարկվում են՝ 1) պատերազմին նախորդող ժամանակաշրջանը (ներառյալ՝ Թավշյա հեղափոխությունը), 2) բուն պատերազմի ընթացքը, 3) պատերազմի հետևանքները և ազդեցությունը Հայաստանի քաղաքական դաշտի վրա:

Հարթելով դժոխքի ճանապարհը

2018-ի ապրիլի 23-ին Հայաստանի վարչապետ (և նախորդ տասնամյակի նախկին նախագահ) Սերժ Սարգսյանը կարճ ուղերձ հրապարակեց

կառավարության պաշտոնական կայքում հայտարարելով երկրի ղեկավարի պաշտոնից իր հրաժարականի մասին: Հրաժարականը տեղի ունեցավ երևանի փողոցներում շաբաթներ տևած զանգվածային խաղաղ ցույցերից հետո, որոնք գլխավորում էր Նիկոլ Փաշինյանը՝ Հայաստանի Ազգային ժողովի հայտնի, բայց քաղաքականապես մարգինալացված պատգամավոր:

Սարգսյանի հրաժարականը շուրջ էր ոչ միայն ցուցարարների համար, որոնք այն ցնծագին տոնեցին փողոցներում, այլև նրա համախոհների ու միջազգային դիտորդների: 2018-ի մայիսի 8-ին Հայաստանի Ազգային ժողովը «ելք» դաշինքի առաջնորդ Նիկոլ Փաշինյանին ընտրեց վարչապետ: Փաշինյանը վարչապետի պաշտոնում փոխարինեց Սարգսյանին, որն այդ պաշտոնում մնաց ընդամենը վեց օր, մինչև որ նրա և նրա ղեկավարած Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) դեմ զանգվածային ցույցերը ստիպեցին նրան հրաժարական տալ:

2018-ի ցույցերը՝ հայտնի որպես Թավշյա հեղափոխություն, խոստանում էին փոխել տասնամյակներ հաստատված «մրցակցային ավտորիտար» համակարգը և լուծել ներքին սոցիալ-քաղաքական խնդիրներ¹: Թեև Թավշյա հեղափոխության պատճառների ու հետևանքների քննարկումը դուրս է այս հոդվածի սահմաններից, այնուամենայնիվ պետք է նշել, որ տասնամյակներ շարունակվող Ղարաբաղյան հակամարտությունը դեր ունեցել է ներքաղաքական փոփոխությունների հանգեցրած այս բուռն իրադարձություններում: Առաջին նշանակալից միջադեպը 2016-ի ապրիլին Լեռնային Ղարաբաղի շփման գծում Հայաստանի և Ադրբեյջանի միջև կարճատև (քառօրյա) պատերազմն էր: Անսպասելի պատերազմն ընդգծեց Հայաստանի անպատրաստությունը և խորացրեց սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ հանրության արդեն իսկ եղած դժգոհությունը, որին գումարվում էր երկրի ֆիզիկական անվտանգության խնդիրը: 2018-ին այս տրամադրությունը քանիցս ընդգծվում է քաղաքական մի շարք գործիչների հարցազրույցներում:

Պատգամավորներից մեկն ասում էր. «Մինչև ապրիլը [2016] քաղաքացիները հանդուրժում էին երկրի ղեկավարության փաստարկն այն մասին, որ թեև սոցիալ-տնտեսական պայմանները լավ չեն, սակայն իշխանությունն անում է հնարավորը և կենտրոնանում իր քաղաքացիների անվտանգությունն ու ապահովությունը երաշխավորելու վրա: Այս ընկալումը փշրվեց Ապրիլյան պատերազմից հետո»²:

Թավշյա հեղափոխության էյֆորիան և Հայաստանի Ազգային ժողովում ինքնահռչակ ժողովրդավարական ուժերի իշխանության հաղթանակը (հատկապես 2018-ի դեկտեմբերի արտահերթ ընտրություններից հետո) վարչապետ Փաշինյանին վստահության ավելի մեծ մանդատ տվեցին՝ երկրում բարեփոխումներ իրականացնելու համար: Ներքին այս վերափոխումներում անտեսվեց կամ առնվազն առաջնահերթություն չդարձավ Լեռնային Ղարաբաղի հարցով Ադրբեջանի հետ բանակցությունների առաջնությունը: Միանգամայն հնարավոր է, որ Փաշինյանը Ղարաբաղի հարցով բանակցելու շտապողականություն չէր դրսևորում՝ դրանով իսկ իրեն իր նախորդներից (Լևոն Տեր-Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան և Սերժ Սարգսյան) հեռու դնելու համար, քանի որ ի տարբերություն նրանց, որոնք պատերազմի ժամանակվա ղեկավարների սերունդն էին և զգում էին, որ Ղարաբաղի չլուծված հիմնախնդիրը Դամոկլեսյան սրի պես կախված է մնալու Հայաստանի ապագայի վրա, կարծում էր, թե Հայաստանի ժողովրդավարական վերափոխումն ու բարեփոխումները կամրացնեն ոչ միայն երկրի պետական ինստիտուտները, այլև երաշխիք կդառնան արտաքին քաղաքականության և արտաքին անվտանգության համար: Ժողովրդավարական անվտանգության ապաստանի այս գաղափարը կրկնվեց արտաքին և ներքին տարբեր համատեքստերում³:

Փաշինյանի փաստարկը, որ ժողովրդավարական անվտանգության ապաստանը համադարձան է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար, արժանացավ քաղաքական մի շարք գործիչների քննադատությանը, որոնք նշում էին, որ առանց Ղարաբաղյան խնդրի կարգավորման կամ առնվազն բանակցությունների առաջնության՝ ժողովրդավարական ներքին բարեփոխումները չեն կարող թափ ստանալ⁴:

Շենց այս համատեքստում է, որ իշխանության գալուց ի վեր Փաշինյանի առջև ծառայած խնդիրը նրա «ազգայնական հավաստագրերի» բացակայությունն էր: 2018-ի մայիսի 1-ին Ազգային ժողովում Փաշինյանի վարչապետի պաշտոնում ընտրության լսումների ժամանակ Հանրապետական կուսակցության պատգամավորը ելույթ էր ունենում Փաշինյանի դեմ՝ ձեռքում պահած նրա «Հայկական ժամանակ» թերթում 2001-ին հրատարակված հոդվածը⁵: Այդ հոդվածում Նիկոլ Փաշինյանը գրել էր. «Ինձ զարմացնում է, որ մեր երկրում դեռ կան մարդիկ, ովքեր իլյուզիաներ ունեն գրավյալ, եթե կուզեք՝ ազատագրված, եթե կուզեք՝ օկուպացված

տարածքների վերաբերյալ: Ես չեմ ընդունում այն տեսակետը, թե լավ դիվանագիտությունը կարող է այնպես անել, որ այդ տարածքները չվերադարձնենք Ադրբեջանին»⁶:

Բանակում ծառայած չլինելու հանգամանքը և Լեռնային Ղարաբաղի մասին Փաշինյանի վերոնշյալ կարծիքն օրինակներ են, որոնք նրան մշտապես դրդում էին սեփական լեգիտիմությունն ու հեղինակությունը սասանված զգալու:

Քննադատությունը, որ Փաշինյանը չունի «ազգայնական հավաստագրեր», ազդում էր նրա հռետորաբանության (և, հնարավոր է, քաղաքականության) վրա՝ ընդգծելու, որ ինքը կենտրոնացած է ոչ միայն ներքին բարեփոխումների վրա, այլև մտածում է Լեռնային Ղարաբաղի ապագայի մասին: Թերևս դա փոխհատուցելու համար Փաշինյանն ու նրա կաբինետի անդամները հայտարարություններ էին անում՝ ընդգծելով կառավարության բազեական քաղաքականությունը: Դրանց մեջ առանձնահատուկ է երկու հայտարարություն: Մեկը այն ժամանակվա պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հայտարարությունն էր 2019-ի մարտի 30-ին Նյու Յորքի հայ համայնքի հետ հանդիպմանը. «Ես՝ որպես պաշտպանության նախարար, ասում եմ՝ «տարածքներ՝ խաղաղության դիմաց» ձևաչափը ես այսօր վերաձևակերպում եմ: Մենք հակառակն ենք անելով՝ «նոր պատերազմ՝ նոր տարածքների դիմաց»»⁷:

Երկրորդ հայտարարությունը եկավ Փաշինյանից ընդամենը չորս ամիս անց՝ 2019-ի օգոստոսի 5-ին Ստեփանակերտում Համահայկական ամառային 7-րդ խաղերի բացման արարողության ժամանակ.

«Հայաստանի կառավարությունն արդեն երկար ժամանակ աշխատում է Հայաստանի երկարատև զարգացման մեզանպատակների շուրջ, որոնք, մեր կարծիքով, պետք է համախմբեն մեր ազգային ներուժը, կենտրոնացնեն մեր ազգային ռեսուրսները՝ այդ նպատակներին հասնելու համար:

Այսօր պատեհ եմ համարում համազգային քննարկման ներկայացնել այդ ռազմավարական նպատակադրումների աշխատանքային տարբերակը՝ խնդիրներ, որոնք Հայաստանի Հանրապետությունը պետք է կարողանա լուծել մինչև 2050 թվականը: Ըստ այդմ, մինչև 2050 թվականը պետք է կարողանանք լուծել հետևյալ խնդիրները.

[...]

Համոզված եմ՝ հիմա ձեզնից շատերը հարցնում են՝ իսկ ինչո՞ւ Արցախի մասին ոչինչ ասված չէ: Պատասխանը շատ պարզ է, որովհետև **Արցախը Հայաստան է և վերջ»**՝⁸ [Ընդգծումը հեղինակինն է]:

Փաշինյանը նաև սկսեց պնդել, որ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները պետք է վերադառնան բանակցային սեղանի շուրջ՝ որպես Հայաստանին և Ադրբեջանին հավասար կողմ: 2020-ի սեպտեմբերի 25-ին (պատերազմի բռնկումից ընդամենը երկու օր առաջ) ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 75-րդ նստաշրջանում Փաշինյանը հայտարարում էր. «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պետք է կարողանա առանց սահմանափակումների որոշել իր կարգավիճակը: Այդ իսկ պատճառով նրանց ընտրած իշխանությունները պետք է կարողանան մասնակցել բանակցություններին»⁹:

2020-ի հուլիսի 12-ին հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի հատվածում սահմանային բախումներ եղան: Դրանց արդյունքում երկու կողմում զոհեր եղան, սակայն բախումների հիմնական հետևանքները դրսևորվեցին դիվանագիտական և ռազմական ճակատներում: 2020-ի օգոստոսի 28-ին (44-օրյա պատերազմի բռնկումից գրեթե մեկ ամիս առաջ)՝ հուլիսյան մարտերի համար մեղալիների հանձնման արարողության ժամանակ, Փաշինյանն իր ելույթում ընդգծում էր հինգ կարևոր նվաճումները, որոնք, նրա կարծիքով, ձեռք էին բերվել հուլիսյան իրադարձությունների ժամանակ: Փաշինյանը թվարկում էր արդյունքները».

«Արդյունք առաջին. արդեն երկար տարիներ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը զարգացնում էր այն թեզը, թե Հայաստանի և Արցախի դեմ պատերազմ չսկսելն արդեն իսկ Բաքվի չափազանց մեծ զիջումն է ոչ միայն Արցախին ու Հայաստանին, այլև միջազգային հանրությանը, որովհետև ըստ նրանց կառուցած տրամաբանության՝ վերջին տարիներին Ադրբեջանի բանակը հասել էր մարտունակության այնպիսի մակարդակի, որ ի վիճակի է շատ արագ, ընդհուպ 24 ժամում լուծել Ղարաբաղի հարցը: [...] Հուլիսյան հաղթական մարտերը ջախջախեցին արդեն շուրջ տասը տարի Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կառուցած խոսույթը՝ ապացուցելով, որ Ղարաբաղի հարցը չունի ռազմական լուծում, և Ադրբեջանը պիտի անխուսափելիորեն որդեգրի կառուցողական մոտեցումներ:

Արդյունք երկրորդ. [...] հուլիսյան հաղթական մարտերն ապացուցեցին մեր քաղաքական հայտարարությունների վստահելիությունը, ապացուցեցին, որ տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի և ուժերի հարաբերակցության մեր գնահատականները սթափ են և ճշգրիտ:

Արդյունք երրորդ. արդեն երկուսուկես տարի հայոց բանակում տեղի են ունենում լայնածավալ բարեփոխումներ: [...] Այդ բարեփոխումները հուլիսյան հաղթական մարտերում հստակ և աներկբա ի ցույց դրեցին իրենց կենսունակությունն ու արդարացվածությունը: Այսօր ըստ էության ապացուցեցինք, որ Հայաստանն ի վիճակի է առանց հյուժող սպառազինությունների մրցավազքի մեջ մտնելու՝ ինտելեկտուալ աշխատանքով, մարտավարական և ռազմավարական նորարարություններով ապահովելու ռազմական առավելություն:

Արդյունք չորրորդ. արդեն երկար ժամանակ մենք խոսում ենք Հայաստանում ռազմարդյունաբերական համալիրի զարգացման մասին և այս ոլորտը հայտարարել ենք առաջնահերթություն: Հուլիսյան հաղթական մարտերն ի ցույց դրեցին հայկական ռազմարդյունաբերության բարձր արդյունավետությունը և ապացուցեցին, որ մենք ունենք տեխնոլոգիական համաշխարհային քարտեզի վրա մեր պատվավոր ու կայուն տեղն արձանագրելու հնարավորություն: [...] Հուլիսյան հաղթական մարտերի ընթացքում մեր զինված ուժերը խոցեցին բարձր տեխնոլոգիական զինատեսակներ, որոնք մինչև այդ համարվում էին անխոցելի: Սա բոլորին հայտնի տեղեկություն է, բայց քչերը գիտեն, որ այդ զինատեսակները խոցվել են հայկական արտադրության և Հայաստանում արդիականացում անցած զինատեսակների փոխգործակցության արդյունքում: [...]

Արդյունք հինգերորդ. հուլիսյան հաղթական մարտերն ի ցույց դրեցին սեփական անվտանգության խնդիրներն ինքնուրույն լուծելու Հայաստանի ընդունակությունը: Բայց այդ ընթացքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, մի կողմից, հստակեցրին ոչ միայն մեզ, այլև ողջ տարածաշրջանին ուղղված սպառնալիքների շրջանակը, մյուս կողմից՝ ամրապնդեցին մեր վստահությունը մեր ռազմավարական դաշնակիցների և գործընկերների նկատմամբ, ինչն առավել մեծացնում է տարածաշրջանի խաղաղության ու կայունության երաշխավորի դերն արդյունավետ կատարելու Հայաստանի հնարավորությունը, ինչի մասին խոսել են հունիսի 19-ին Երևանում տեղի ունեցած՝ Հայաստանի և Արցախի անվտանգության խորհուրդների համատեղ նիստում»¹⁰:

44-օրյա պատերազմի բռնկմամբ այս հայտարարություններն ամբողջությամբ հերքվեցին ընդամենը մեկ ամսվա ընթացքում, և Հայաստանի զինված ուժերի հնարավորությունների ու Ադրբեջանին թերագնահատելու Փաշինյանի պնդումներն ու գնահատականներն ամբողջովին փշրվեցին:

Հուլիսյան մարտերին հետևեց Սևրի պայմանագրի վերաբերյալ բարձր մակարդակի երկու հայտարարություն օգոստոսին: Հայտարարություններից մեկի հեղինակն այն ժամանակվա նախագահ Արմեն Սարգսյանն էր, որը 2020-ի օգոստոսի 10-ին սիրիական «ալ-Ազմենահ» թերթին տված հարցազրույցում ընդգծում էր Սևրի պայմանագրի պատմական նշանակությունը¹¹: Գիտությունների ազգային ակադեմիայում Սևրի պայմանագրի ստորագրման 100-ամյակին նվիրված համաժողովում երկրորդ հայտարարությունը հնչեցրեց ինքը՝ վարչապետը՝ ասելով, որ Սևրի պայմանագիրը «փաստում և ամրագրում էր հայ ժողովրդի պատմական անվիճելի առնչությունը Հայկական լեռնաշխարհի հետ, որտեղ հազարամյակներ ի վեր ծնվել, ապրել և պետություն ու մշակույթ էր կերտել հայ ժողովուրդը»¹²:

Անկասկած, իրադարձությունների և հայտարարությունների այս շարքը եթե ոչ առաջնորդել, ապա առնվազն նպաստել է սեպտեմբերի 27-ի Ադրբեջանի ագրեսիային Թուրքիայի լիակատար աջակցությանը: Սրա մարգարեական ձևակերպումը 2020-ի սեպտեմբերի 1-ին տվեց Ժիրայր Լիպարիտյանը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի նախկին ավագ խորհրդականը և մինչև 1996-ը Ադրբեջանի ու Թուրքիայի հետ Հայաստանի գլխավոր բանակցողը: Հայկական լրատվամիջոցներում հրապարակված հոդվածում նա պնդում էր.

«ա) Ադրբեջանը չկարողացավ ռազմադաշտում հաջողություն ձեռք գցել հուլիսին, սակայն այդ պարտությունը վերածեց դիվանագիտական ամենամեծ հաջողության՝ Թուրքիային վերջնականապես համոզելով, որ դա նաև Թուրքիայի պարտությունն է, որպեսզի Թուրքիային լիովին ներգրավի խնդրի մեջ:

բ) Անցյալ ամիս Հայաստանը Սևրի դաշնագիրը դարձրեց պետության արտաքին քաղաքականության մեկ կարևոր մասը, Թուրքիայի ընկալմամբ՝ ամենակարևոր մասը: Չգիտեմ՝ մեր ղեկավարները դա գիտակցաբար արեցին, թե ոչ: Այդ իմաստով Թուրքիայի դեմ նախագահի և վարչապետի